

Մ. Մխիթարյան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՊՐՈՊՏՈՒՄՆԵՐ

Միջայել նալբանդյանի երկերի լիակատար ժողովածուի հրատարակու-
թյունը, նրա կյանքի տարեգրության ստեղծումը, ինչպես և «Նալբանդյանը և
նրա ժամանակը» երկհատորյա մենագրության հրապարակումը հանդիսացան
նալբանդյանագիտության կարևորագույն նվաճումները:

Մեր կարծիքով, սակայն, նալբանդյանագիտության մեջ կա մի փոքր
բնագավառ, որը դեռևս կարոտ է քննության: Հայտնի է, որ նալբանդյանի
երկերի լիակատար ժողովածուի մեջ առաջին անգամ մտցվել են մի շարք
հոդվածներ, որոնք «Հյուսիսսփայլ»-ում ստորագրվել են զանազան գրակսն
կեղծանուններով: Այդ հոդվածների մեծ մասն, անպայման, պատկանում է
Նալբանդյանի գրչին և մեր բանասերները շնորհակալ գործ են կատարել հա-
յրստուացնելով նալբանդյանի ժառանգությունը: Սակայն, դրանց հետ միասին
Նալբանդյանին են վերագրվել հոդվածներ, որոնց ուշադիր ընթերցանությունը
կասկած չի թողնում այն բանում, որ դրանք պատկանում են այլ հեղինակների:
Բովում է ժամանակն է, որ մեր բանասերները ուշադրությամբ քննելով այդ
հոդվածները, կարողանան զտել նալբանդյանի ստեղծագործությունը և այն
ազատեն ավելորդ բեռից:

Այդ կարգի հոդվածներից մեր ուշադրությունը գրավել է Ա. Ա. Ե. ստորա-
դրությամբ «Նամակ Կոմս Էմմանուելին» խորագիրը կրող հոդվածը, որը տպա-
յրվել է «Հյուսիսսփայլ»-ի էջերում և ուղղված է Մանդինյան քահանայի դեմ¹:

Այդ նամակը ժամանակին անվերապահորեն համարելով նալբանդյանի
որչի արգասիքը, մենք փորձել ենք վերծանել նրա մեջ զետեղված ֆելիետոնը²。
Սակայն նամակի խորագրին ուսումնասիրությունը մեզ հետագայում բերեց
այն եզրակացության, որ այն չէր կարող պատկանել նալբանդյանի գրչին՝ հե-
տևյալ նկատառումներով:

1. Նամակը տպագրվել է «Հյուսիսսփայլ»-ի 1861 թ. 9-րդ համարում, այն
ժամանակ, երբ նալբանդյանը 1860 թ. նոյեմբերից գտնվում էր արտասահ-
մանյան ճանապարհորդության մեջ և իր իսկ խոստովանությամբ ոչ ժամա-
նակ, ոչ էլ հնարավորություն ուներ աշխատակցելու «Հյուսիսսփայլ»-ին: Աւս-
պես, 1861 թ. հունիսի 26-ին (հուլիսի 8-ին) Կալկաթայից Ա. Սուբսնշահին
ուղղված նամակում նա գրում է. «Ամենևին ձեռնհաս չեմ «Հյուսիսսփայլ»-ի

¹ 1860 թ. հունվարին Մանդինյան քահանան իր «Մեղու Հայաստանի» թերթում
տպագրում է բանաստեղծ Սեյադի «Տեսիլ» պակվիլային բանաստեղծությունը՝ ուղղված
Ս. Նաղարյանի դեմ: Թեկուզ ուշադրումով, Հյուսիսսփայլականները Ա.Ա.Ե.-ի պղծմեկա-
կան նամակով պատասխանում են Մանդինյանի ելույթին:

² Տե՛ս ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր», 1936, № 4:

համար աշխատելու. եղանակը, դատաստանական զբաղմունքը, պանդխտության դժնդակ ծանրությունը խլում էն ինձանից իմ վերջին հնարները: Բայց դու աշխատիր գեթ մի հատ ազատամիտ բան թարգմանելու: Ինչ և իցե այդ օրագիրը մեր թախտի օոգանն է. հույս ունիմ, որ շուտով կկատարես խնդիրքս: Լազարյանցը կսրբագրե այն շնչին թերությունքը, որ պիտի լինին քո գրվածքում»¹:

Գրեթե նույն միտքն է հաստատում և Ս. Նազարյանը: 1861 թ. մարտին նա գրում է. «Նալբանդյանը այս բոլորիս Լոնդոնումն է, ոչինչ լուր չունիմ նորանից և ոչինչ գործակցություն «Հյուսիսսփայլ»-ին: Նա գնացել է այնտեղ Նախիջևանցոց հանձնարարությանը, որ գործ կատարե, Հնդկաստանի մեջ կտակած արծաթը ձեռք բերելու Նախիջևանի օգտի համար: Նա և ինձ մոռացել է սրբմն ևս առավել հեռավորքը»²:

Ինչո՞վ ապա բացատրել այն հանգամանքը, որ «Հյուսիսսփայլ»-ի 1861 թ. 10 և 11-րդ համարներում տպագրվել են Նալբանդյանի «Իտալացի աղջկուհրգը» բանաստեղծությունը և Ալֆոնզո Ռաթթի ստորագրությունը կրող «Հոռմեական նամակ»-ը: Բանն այն է, որ բանաստեղծությունը գրված էր նախքան նրա արտասահմանյան վերջին ճանապարհորդությունը և վաղուց կարող էր գտնվել լազարյանի տրամադրության տակ: Ինչ վերաբերում է «Հոռմեական նամակին», ապա այդ հոդվածում արծարծված են 1858 թ. վերջին Ներսիսյան դպրոցում տեղի ունեցած ցնցող իրադարձությունները, որոնց մասին Նազարյանը տակավին 1859 թ. մի շարք նամակներ և նույնիսկ հոդված էր ստացել Թիֆլիսից: Նազարյանի մի նամակից պարզվում է, որ գրաքննությունը ժամանակին նրան արգելում է տպագրել այդ դեպքի առթիվ Թիֆլիսից Գ. Փարսաշանյանի (Գ. Մուրադյան) ուղարկած թղթակցությունը և Նազարյանն ստիպված է լինում այդ հոդվածը իր ընդարձակ ծանոթություններով հետ ուղարկելու Թիֆլիսի իր բարեկամներին, որպեսզի նրանք գոնե ձեռագիր վիճակում այդ հոդվածը մասսայականացնեն հասարակության լայն շրջաններում³:

Ելնելով ստեղծված վիճակից, Նալբանդյանը հավանաբար ստիպված է եղել դիմելու եղուպոսյան լեզվի օգնությանը և գրել է «Հոռմեական նամակը», որը, մեր կարծիքով, Նազարյանը նպատակահամար է գտել գրաքննական արդյունքները շրջանցելու նպատակով, տպագրել ուշացումով, 1861 թ.:

Մինչ իր արտասահմանյան ճանապարհորդությունը Նալբանդյանը հաղիվ թե անդրադառնար Ա. Ա. Ն. ստորագրությունը կրող նամակում արծարծված հարցերին: Ինչպես ասացինք, «Տեսիլ» բանաստեղծությունը տպագրվել էր 1860 թ. հունվարի համարում. Նալբանդյանը 1859 թ. հոկտեմբերից մինչև 1860 թ. հունիսը գտնվում էր Պետերբուրգում և գրադված էր իր քննություններով, թեկնածուական դիսերտացիայով և այս արտասահմանյան ճանապարհորդության նախապատրաստական աշխատանքներով: Միայն հունիսին նա գալիս է Մոսկվա և 11 օրից հետո ճանապարհվում Նոր-Նախիջևան: Եթե այդ ժամանակամիջոցում, կամ հենց Մոսկվայում նա հասցրած լինելու դրել այդ նամակը, ապա ոչ մի հիմք չենք տեսնում այն բանում, որ պոլեմիկական այդ ելույթի տպագրությունը Նազարյանը հետաձգեր ամբողջ մեկ տարով:

¹ Ս. Նալբանդյան, Ե.Լ.Փ., հատ. 4, էջ 109:

² ՀՄՍՌ Պետ. Մատենադարան, Պատկանյանների արխիվ, թղթ. 141, վազ. 303:

³ Տե՛ս նույն տեղում, Նրիցյանի արխիվ, թղթ. 150, վազ. 49:

2. Նալբանդյանին վերագրվող այդ նամակում զետեղված է մի ֆելիետոն, որն սկսվում է հետևյալ պարբերությամբ.

«Պատվելի առողջամիտ ազգակից, գիտեմ, որ կցանկանայիր իմանալ որևիցե մեկ նորություն, եթե վաղուց լսած չլինեիր: Անցյալ 1860 թվականի հունվար ամսո 23-ին պատահելով Սատանի հայ Շումեհ գյուղի մեջ, տեսա մի զարմանալի անասնանոց, թեպետ վաղուց տեսած էի, բայց այդ ամենից զարմանալի էր, որի մուտը արժեր վեց կոպեկ. շուտով հատուցի և մտա. բայց ի՛նչպես զարմացա վերահասու լինելով...»¹:

Այս հատվածը գրեթե բառացիորեն արտագրված է «Հիշատակարանի»¹ էլ ղլխում զետեղված մի նամակից, որը մեր կարծիքով, ուղղված է Գ. Այվադովսկու «Մասյաց աղավնու» դեմ և սկսվում է հետևյալ պարբերությամբ.

«Ինձ վաղուց հայտնի է, որ հիշատակարան ես գրում և կցանկանայիր իմանալ որևիցե անսովոր բան: Այս երկու ամսումը պատահելով մի քանի վաճառահանդեսների մեջ, տեսա մի թափառական դազանանոց, որի մուտքը արժեր կես մանեթ: Շուտով հատուցի և մտա, բայց ի՛նչպես զարմացա վերահասու լինելով նորա տիրոջ խաբեբայությունը»²:

Հազիվ թե Նալբանդյան-պոլեմիստը արտասայտչական նոր միջոցներ չգտնելով 1861 թ. ստիպված լիներ արտագրելու 1858 թ. մի ամսագրի դեմ զրած իր ստեղծագործության թեկուզ և մեկ պարբերությունը՝ մի այլ օրգանի դեմ ուղղված նամակում:

3. «Հիշատակարանի» էջերում կոմս էմմանուելին ուղղված նամակներից և ոչ մեկում մեծարանքի խոսք չի նկատվում Նալբանդյանի հասցեին: Այդ նամակները որպես օրենք սկսվում են հետևյալ ժխտ բառերով. «Ողորմած պարոն Կոմս էմմանուել», «պարոն Կոմս էմմանուել», «Պատվական եղբայրս Կոմս էմմանուել», «Սիրելի եղբայրս Կոմս էմմանուել» և «արգո պարոն կոմս էմմանուել»: Սակայն Ա. Ա. Ե.-ի նամակն ուղղված էր իր «ազնվամիտ և անխարդախ Սակայն Ա. Ա. Ե.-ի նամակն ուղղված էր իր «ազնվամիտ և անխարդախ ազգակից», «պատվելի առողջամիտ ազգակից» Կոմս էմմանուելին, որի «ճշմարիտ ազգասիրության և ազգօգուտ գործակատարության» համար նամակագիրը մեծարում է նրան:

4. Ա. Ա. Ե.-ն վկայակոչելով Նալբանդյանի «Հիշատակարան»-ում արտահայտված այն միտքը, թե Կոմս էմմանուելը ներկարարի կարասներ ունի, որոնց մեջ ընկած կենդանիները հասարակությանը երևում են «ներկված և դժվարճանաչելի բրդով», գրում է. «Քո գործարանի կարասները շունին նյութերի պակասություն և դու հարկադրված ես այդ գործերը հառաջ տանել մինչև ժամանակի վախճանը: Երանի թե ես ևս օգնող լինեի այդ գործակատարությանը, նորա համար, որ Հայաստանի ծխյալ ավերակների մեջ բավականին հաստամորթ առջիկ կան ներկելու: Բայց ավաղ ասելույս, նոքա շատ, և ես միայն. և կարասներս սակավ և ներկիս դույները պակասավոր, խնդրեմ դուք ինքներդ օգնություն հասուցանեք, եթե ո՛չ, ինձ ևս գերի կվարեն դեպի Մասյաց հաղթանդամ ուրվականների ամրոցը»³:

Այս նամակում այնքան ակնածանք կա դեպի Կոմս էմմանուելի տարվա

¹ Մ. Նալբանդյան, Ե.Լ.Ժ., հատ. 2, էջ 362:

² Նույն տեղում, հատ. 1, էջ 382:

³ Նույն տեղում, հատ. 2, էջ 362:

մեջ զանազան գույներով յներան կենդանիներ ներկող ամենակարող տակա-
ները և այնքան մտավախութիւն իր կարասների պակասության և գույների
սակավութեան մասին, որ շի կարելի չնշմարել հեղինակի անվստահութիւնը
«Հիշատակարանը» հիշեցնող գործ ձեռնարկելու համար, որի անհրաժեշտու-
թիւնը, սակայն, խիստ մեծ էր այդ օրերին:

5. Նալբանդյանի հետ միասին մեծարելով Նազարյանին, Ա.Ա.Ն.-ն նրա
գործանիքներից է համարում և այն, որ «այդ ճշմարտութեան սպասավորը քաջ
գիտենալով յուր սուրբ պարտականութիւնը ղեպի յուր կրօնը և ղեպի յուր ըն-
կերը, հավասարապես լցուցել է մինչև ցայսօր յուր սպասավորութեան շափր և
սլաքմանը»¹:

Հայտնի է, որ «Հյուսիսսփայլ»-ի 1860 թ. 10-րդ համարում տպագրված
«Մենդելսոն, Լեսսինգ և Լավատեր» հոդվածին կցած ծանոթութեան համար կա-
տաղի հալածանք է սկսվում Նազարյանի դեմ: Նա հռչակվում է լյութերական,
սողանդավոր, հայոց եկեղեցու և հավատի թշնամի. նույնիսկ էջմիածնի սինո-
դի կողմից տրվում է «Հյուսիսսփայլ»-ը փակելու վճիռը: Նազարյանի հսկայա-
կան ջանքերից հետո միայն հաղղվում է փրկել ամսագիրը: Անշուշտ 1860 թ.
վերջի և 1861 թ. սկզբի այս լուրջ իրադարձութիւնները նկատի ունենալով նամա-
կագիրը, երբ շեշտում էր Նազարյանի նվիրվածութիւնը կրօնին և հետևապես
նրա՝ դեմ բարդված հերյուրանքների անհիմն լինելը:

Նախ, Նալբանդյանը Նազարյանին չէր կարող գնահատել նրա կրօնասի-
րութեան համար: Ապա, անկախ այդ բանից, նախքան իր արտասահման մեկ-
նելը նա չէր կարող կանխատեսել հետագայում միայն տեղի ունենալիք իրա-
դարձութիւնները:

Վերջո, արտասահմանում գտնված ժամանակ պարզված լինելով միան-
դամայն լուրջ հարցերով, Նալբանդյանը հաղիվ թե անհրաժեշտ դոնեք ուշա-
դրութիւն նվիրելու Մանդինյան քահանային:

6. Ա. Ա. Ե.-ն իր նամակում հետևյալ ուշագրավ միտքն է հայտնում.
«Գիտեմ, որ կցանկանայիր խմանալ որևէ մեկ նորութիւն, եթե վաղուց լսած
չլինեիր: Առաջին՝ այսպիսի աննպատակ թվացող այս միտքը հետաքրքրա-
կան է հետևյալ նկատառումով. նամակագիրը, հարկավ, համոզված էր, որ Նալ-
բանդյանը «վաղուց», այսինքն արտասահմանյան ճանապարհորդութեան
նախօրյակին կարողացած կլիներ «Մեղու Հայաստանի» թերթի համապատաս-
խան համարը և գուցե նույնիսկ մոռացած այն, ուստի նրա ուշադրութիւնը
հրավիրում է այդ հարցի վրա, որի դատավճիռը պատրաստվում էր կարգու
նրա ոճով և եղանակով:

7. «Հիշատակարան»-ում Նալբանդյանն այս կամ այն առիթով խոսելով
իր և Նազարյանի փոխհարաբերութիւնների մասին, նրան կոչում է միմիայն
«որեղբայր»: Ա. Ա. Ե.—ն սակայն, գրում է. «Ձեր համար ասում են, որ ներ-
կարարի կարասներ ունի յուր բարեկամի գործարանի մեջ»:

8. Ա. Ա. Ե.-ի նամակից երևում է, որ Նալբանդյանի հետ միասին նա
կապված է նաև Նազարյանի հետ, որի մասին արտահայտվում է պատկառան-
քով, և գրեթե երկյուղածորեն:

Նազարյանի հայացքների որոշակի ազդեցութեան հետ են կապվում
Ա. Ա. Ե.-ի նամակի մի շարք խորհրդածութիւնները՝ կապված հայերի նախ-

¹ Մ. Նալբանդյան, Ե.Լ.Փ., հատ. 2, էջ 359:

նյի փառքի և ներկա անմխիթար կացության, լուսավորության հաղթանակի, նախահայրերից ժառանգած ավանդը պահպանելու և այն ապագա սերնդին կտակելու կոչի հետ: Միանգամայն պարզ է, որ «Երկրագործության» հեղինակը 1861 թ. չէր կարող մտորել վերոհիշյալ խղճով հարցերի շուրջը:

9. Նամակում բավական տեղ է հատկացված Ստեփաննոս քահանայի «ղպրոցի» նկարագրությանը Քիֆուսում, որն անկասկած ինքնակենսագրական տարր է պարունակում և չի կապվում Նալբանդյանի կենսագրության հետ: Հայտնի է, որ խոսելով իր մանկական տարիների կրթության մասին, Նալբանդյանն իր ուսուցչին (Օգսենտ տիրացու) անվանում է «վարպետ», կամ «խալֆա», մինչդեռ այս նամակում որոշակիորեն խոսվում է Ստեփաննոս Մանդինյանի մանկավարժական գործունեության մասին:

10. Նամակի լեզուն դեռևս անկատար, բարբառային և գրաբարյան մի շարք արտահայտություններով հարուստ լեզու է, որը բնորոշ չէ Նալբանդյանի հատկապես այդ օրերին գրած հոդվածների լեզվին:

Այսպիսով, մենք եկել ենք այն եզրակացության, որ Ա. Ա. Ծ. ստորագրությունը կրող նամակը պատկանում է «Հյուսիսափայլ»-ի խմբագրությանը մոտ կանգնած գործիչներից մեկի գրչին, որն իր պարտքն է համարել պաշտպանել ամսագրի խմբագրի պատիվը Մանդինյանի թերթի հարձակումներից և մերկացնել Մանդինյանի գործունեության հակաժողովրդական էությունը: Այդ նամակագիրը շնայած անձամբ ծանոթ չի եղել Նալբանդյանի հետ, բայց այնքան լավատեղյակ է նրա ստեղծագործությանը և դադափարապես այնպես հարազատ նրան, որ իրեն իրավունք է վերապահում օգտվելու նրա պոլեմիկական միջոցներից և բազմիցս վկայակոչելու «Հիշատակարան»-ի զանազան դրվագները: Նամակի ուշադիր ընթերցանությունից բացահայտորեն երևում է իսկապես երրորդ անձնավորության ջերմ սիրո արտահայտությունը Նալբանդյանի և Նազարյանի նկատմամբ, ինչպես և աչքի է ընկնում այն համեստ տոնը, որով այդ անձնավորությունն արտահայտվում է իր կարողությունների մասին:

Ինքնուրույն ոչ մի գաղափարով աչքի չընկնող Ա. Ա. Ծ.-ի նամակը լուրջ մատնում է Նալբանդյանին նմանվելու հեղինակի ջանքերը: Բնականաբար, այդ նամակը որևէ բան չի ավելացնում Նալբանդյանի գրական ժառանգությանը և որքան շուտ Նալբանդյանն ազատվելու լինի նրան վերագրված այդ կարգի հոդվածներից, այնքան լավ: